Կազմված է 2 հունիսի 2023թ.
Բաղկացած է 3 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ԴՈՄՈՒՍ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ հիմնադրի/բաժնետիրոջ
02/06/2023թ.-ի № 1/23 որոշմամբ

տնօրեն՝ Գոռ Ներսեսի Ներսիսյան

2 հունիսի 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

_____ԿՈՂՄԻՑ

«22» 06 2023թ.

գրանցման թիվ 286.120.1325300

ՀՎՀՀ 02847758

աշխատակից՝ _____

«ԴՈՄՈՒՍ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԴՈՄՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերությունը ստեղծվել է «ԴՈՄՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա համապարփակ իրավահաջորդը՝ համաձայն վերջինիս միակ մասնակցի 02/05/2023թ.-ին թիվ 2/23 որոշմամբ հաստատված փոխանցման ակտի:

2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ԴՈՄՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество «ДОМУС»
կրճատ՝ ЗАО « ДОМУС »
անգլերեն լրիվ՝ «DOMUS» Closed Joint Stock Company
կրճատ՝ «DOMUS» CJSC

4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Կենտրոն, Վարդանանց փողոց, շենք № 18/1, բնակարան № 42:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,000 (հազար) դրամ, որը կազմում է 1,000 (հազար) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 (մեկ) դրամ:

Բոլոր 1,000 (հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են Ընկերության միակ հիմնադիր/բաժնետեր Արմեն Ազատի Մուրադյանին (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ծնված՝ 29/06/1972թ.-ին, ՀԾՀ՝ № 3914720263, նույնականացման քարտ՝ № 006331292, տրված 29/08/2017թ.-ին՝ 011-ի կողմից, բնակության վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա փողոց, շենք № 19/1, բնակարան № 78): Ընկերության բոլոր տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված:

6. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

7. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

8. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:

9. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն

ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

10. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում բաժնետիրոջ պահանջով ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ բաժնետերերի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել ընկերությանը պատկանող բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

11. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

12. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Մեկ բաժնետեր ունենալու դեպքում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կայացնում է այդ միակ բաժնետերը: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում:

Ընկերությունը պարտավոր է տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարման մասին իր բաժնետերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 5 (հինգ) օր առաջ՝ ծանուցումը կատարելով էլեկտրոնային փոստով և/կամ օրենքով նախատեսված այլ եղանակներով:

13. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

14. Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում: Խորհրդի իրավասության հարցերը վերապահվում են Ընկերության ընդհանուր ժողովին:

15. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, որը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է նույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «2-5» ենթակետերով սահմանված իրավասությունները: Ընկերության տնօրենը ընտրվում է մեկ տարի ժամկետով: Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է ցանկացած ժամանակ և առանց հիմնավորման դադարեցնել տնօրենի լիազորությունները: